№ 95 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23 № 95

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նուխուց. Նամակ Շուշուց. Նամակ Մեղրիից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընտրողական պայքարը Միացեալ Նահանգներում. Տեղեկութիւններ Թիւրքահայերի կեանքից. Նամակ Թիւրքահայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տեղեկագիր Շուշու կալուածական խնդրի և հոգաբարձութեան 27-ամեայ գործունէութեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Օգոստոսի 3-ին

Քաղաքներ մանեկած, փոքռված մարդը, Նուխու առևտրի, նիստ ու կացի և սովորութիւնների վրա կը մնայ ապշած թէ ինչ են վաստակում Նուխեցու բազմաթիւ խանութները, որոնց թիւը, եթէ չափազանցութիւն չանեմ, կը լինի մինչև 1,500։ Նուխեցի երիտասարդը տեղիս քաղաքային ուսումնարանում աւարտելով, կամ գրադրի պաշտօնով մանում է գաւառական կառավարութիւնը, կամ եթէ ունի 100—150 ռուբլի դրամագլուխ, խանութ է բաց անում մանր ապրանքների։ Նուխեցի մայրը տեսնելով իր որդուն խանութում նստած, հպարտանում է։ Առևտուրը Նուխում գլխաւորապէս լինում է ամարային երեք ամիսներին։ Ամենայն օր քաղաքի Ղշլախ թաղից մտնում է մօտ 350 սայլ սեխ և ձմերուկ, (իւրաքանչիւր սայլում պէտք է հաշուել 180—200 հատ), բացի միւս մրգեղէնները, և այնպիսի մեծ քանակութիւն մրգեղէնի այսպիսի փոքրիկ քաղաքում, ինչպէս Նուխին է, ծախվում է 10 ժամվայ մէջ. մինչև հիմա էլ Նուխեցու համար անհասկանալի է, թէ ինչու քաղաքացիք դեղնած և հիւանդոտ են այսպիսի մաքուր օդում և առատ ապրուստում։

Կիրակի և տօն օրերը Նուխու ինչ փողոցով կուզէ թող անցնէ օտարականը, ամենայն կողմից նրա ականջին կը հասնեն զուռնայի, թառի և դարմանի ձայներ։ Նուխեցին այդ ժամանակ նստած իր պարտէզում իր գերդաստանով և հարևաններով, անց է կացնում իր օրը պարով, արբեցողութեամբ և հայհոյանքով, այնպէս որ շաբաթվայ մէջ վաստակած մի քանի աբասին թէ գործաւորը և թէ խանութատէրը, տալիս են գինուն և զուռնային։

Նոյն Նուխեցուն սեպտեմբերին կը տեսնէք իր տղայի կամ աղջկայ ձեռքը բռնած, դիմում է խնդիրքով ուսումնարանի հոգաբարձութեան՝ վերցնել ձրի իր որդկերանց։ Այժմ թող տեսնէ ընթերցողը Նուխեցու կնոջ հագուստը, նրա տուրնիւրը, և անպատճառ կը կարծէ որ հարուստ մարդու կին է սա, իսկ ընդհակառակն նոյն Նուխեցին միշտ աղքատ կը ձևանայ։

Ամբողջ Նուխին, որ յայտնի է ինչպէս Կովկասի մի շերամապահութեան կենտրոն, ներկայացնում է գործարաններ իրանց հարիւրաւոր բանւորներով։ Ովքեր են այդ գործարանների տէրերը, անշուշտ կը հարցնէ ընթերցողը. դրանք հարիւրաւոր վերստերով եկած ադուլեցիներ են կամ ուրիշ օտարաքաղաքացիք։ Ամբողջ Նուխու առևտուրը գտնվում է դրանց ձեռքին և գլխաւորապէս մանուֆակտուրային առևտուրը, որը գլխաւոր տեղն է բռնում ոչ միայն Նուխում, այլ և Զաքաթալայում, Կախում, Աղդաշում և Նուխուն մօտիկ այլ տեղերում։ Նուխում ծախողը ադուլեցի է և առնողը ադուլեցի, որը իր գնածը տանում է վերոյիշեալ գիւղաքաղաքները։ Մի խօսքով Նուխուն կից երեք չորս դաւառների առևտուրը գտնվում է աշխատաւոր ադուլեցու ձեռքին։ Օտարականն է Նուխին առաջ տանողը. ուսումնարան, քահանայ, ուսուցիչ, եկեղեցի և այլ բարեգործական նպատակների համար ադուլեցին չէ խնայում իր կօպէկները։ Չը նայած այսքան նուիրատուութիւնների, Նուխեցին օտարական ադուլեցուն զանազան անվայել մականուններ է տալիս։ Չէյթունցիների օգտին կամ թէ չէ մեր վիպասան Րաֆֆիի արձանի համար ժողովուած գումարը, թող իմանայ ընթերցողը, ադուլեցին է նուիրել. նոյն գումարի մի տասերորդականը Նուխեցուն չէ։ Նոյն իսկ Նուխեցի պարսիկը այդ նուիրատուութիւններին սիրով մասնակցում է, իսկ հայը այդ տեսնել և հասկանալ չէ ուզում։

Նուխեցին եւրոպականի է ձգտում, հետևելով մոդաների, սակայն իր կեղտը ծածկել չէ ուզում։ Նուխեցին սաստիկ տաքացող և յուզվող է։ Փորձիր մի խօսք ասել նրան. նա եթէ բարի է՝ քեզանից վրէժը կը հանի մի ամսում, եթէ մի փոքրը տաքարիւն է՝ իսկոյն կապտակէ քեզ կամ թէ չէ սուր և ատրճանակ կը հանէ։ Ամեն դատարկ բանի համար Նուխեցիք պատրաստ են միմեանց սպանել։ Նորերումս երկուսը առաջարկում են մէկին իրանց կտրած սեխի համը տեսնել, վճիռ տալու համար թէ ո՞րն է քաղցրը. նա ընդունում է նրանց առաջարկութիւնը և խօսում է յօգուտ մէկի։ Այն ժամանակ միւսը առանց երկարացնելու վէճը հանում է դանակը և խրում հակառակորդի փորը։ Այդպիսի սպանութիւն Նուխեցիք անուանում են «տղամարդութիւն»։ Սպանողը այժմ բանտումն է, Աստուծոյ հովանաւորութեան թողնելով օրական հացի կարօտ իր ընտանիքը։ Դա է «տղամարդութիւն»։

Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 9-ին

Կիրակի օրը, ամսի 7-ին, կայացաւ Հայոց Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի ընդհանուր ժողովը։ Այս երկրորդ անգամն էր, որ գումարվում էր ժողով. առաջին անգամ անդամներից չատերը զլացել էին գալու նիստին։ Ներկայ էին քսան հոգի՝ բոլոր անդամների թիւի կէսից պակաս։ Հրաժարված նախագահի տեղ ժողովը նախագահ ընտրեց Նիկ. Աթաբէկեանցին, բայց նա էլ հրաժարվեց, առարկելով թէ «ինքն իրան խօսք է տուել չը խառնվել ազգային գործերի մէջ» և հրաւիրեց նախագահ ընտրել կամ երիտասարդութիւնից կամ ս. առաջնորդին։ Զարմանալի թեթև աչքով են նայում մարդիկ հասարակական մի որ և է պաշտօնի վրա, ասես դա լինի մի խաղալիք. այդ պարոնները համ դժգոհութիւն են յայտնում առաջնորդից նրա գործունէութեան համար, համ էլ յանկարծ հրաւիրում են ժողովրդին, որ մի նոր պաշտօնի մէջ էլ ընտրեն նրան։ Վերջապէս նախագահ ընտրվեց մի ուրիշը, որը և գլխաւորապէս զբաղեցրեց ժողովը հետևեալ հարցով։

Գործավարը կարդաց ընկերութեան անցեալ տարվայ վճիռը՝ բանալ տեղս օրիորդական մի արհեստագիտական ուսումնարան, յայտնելով նըմանապէս և այն, որ տեղիս ճիւղը խնդրել էր Թիֆլիսի ընկերութիւնից 300 ր. օժանդակութիւն այդ ուսումնարանի համար։ Այժմ Թիֆլիսի Բարեգործական ընկերութիւնը իր մի գրութեամբ մերժում է 300 ռուբլիի օժանդակութիւնը։ Ի նկատի ունենալով որ այդպիսի մի ուսումնարան տեղիս ճիւղը չէ կարող բանալ սուկ իր միջոցներով (տարեկան ծախս նշանակված է եղել minimum 1,600 ր.) ժողովը վճռեց Արհեստաւորաց ուսումնարանի տեղ բանալ մի գրադարան-ընթերցարան, որի բարոյական օգուտը մեծ կը լինի մեր յետ ընկած քաղաքում։

Նոյն օրը երեկոյան նոյն ընկերութեան օգտին սիրողները տուին մի ներկայացում։ Խաղացին. «Անանուն կատակ», «Էս էլ քի մոցիքլութիւն» և Կրոթ-Կրոթ»։ Ներկայացումը լաւ անցաւ։ Սիրողները բարեխղճաբար սովորել էին իրանց դերերը։ Պիտի ասեմ որ այն անդամները, որոնք ընկերութեան նիստերում այնքան երկար ու բարակ խօսում են ընկերութեան սուղ միջոցները բարեգործ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Շուշու կալուածական խնդրի և հոգաբարձութեան 27-ամեայ գործունէութեան։

Հասարակութիւնը ընտրում է իր միջից երկու պատգամաւոր, որոնք ներկայանալով Մատթէոս կաթողիկոսին Էջմիածնում, խնդրում են հաստատել կայացված վճիռները։ Մատթէոս կաթողիկոսը ամենայն յօժարութեամբ կատարում է հասարակութեան խնդիրքը և տալիս է հետևեալ կոնդակը, որը իբրև պատմական նշանակութիւն ունեցող զօկումէնտ, ամբողջութեամբ դնում ենք այստեղ։

«ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համադգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթողիկէ Էջմիածնի։ Ամենասիրելի հասարակութեան Հայոց Շուշւոյ Քրիստոսական բազմապատիկ օրհնութեամբ ծանուցանեմք. զի զխնդիր ձեր գրեալ առմեզ ի 28 Մայիսի ի մասին հաստատութեան հոգաբարձուաց հոգևոր դպրոցին Շուշւոյ ընտրելոց ի ձէնջ ըստ զօրութեան կոնդակի մերոյ տուելոյ ձեզ ի 4 Դեկտեմբերի անցեալ 1859 ամի ընդ համարաւ 284. յաղագս ճոխացուցանելոյ զհոգևոր դպրոցն ձեր ըստ կարգադրութեան Ներսիսեան ուսումնարանին, որ ի Տփխիս, ի 11 ամսոյս ընկալաք ընդ երկուց սիրելի զաւակացն մերոց և հաւատարիմ պատգամաւորաց տեղւոյդ հասարակութեան պարոն Բաբայի Բէկլարեանց և պարոն Գէորգայ Ամբրումեանց, ընկալաք այո և բերկրեցաք ի հոգի, գովեցաք զձեր ազգապայծառ հեռատեսութիւն, գովեցաք զձեր աղդասիրական եռանդն։ Մաղթանս այո, աղօթս և խնդրուածս վերանկեցաք ի բարձունս յաթոռ Աստուածութեան յաղագս հաստատուն և անսփոփոխ պահպանելոյ զձեզ յայսմ և սոյն օրինակ եռանդեան ազգասիրութեան ի փառս վերնախնամ տեսչութեան, և յօգուտ ազգիս և հայրենի եկեղեցւոյս Հայաստանեայց։

«Ուրախութեամբ ոգւոյ աւասիկ զընտրեալսն ի ձէնջ ի 24 Յունվարի այսր 1860 ամի ի ներկայութեան առաքեցելոյն ի մէնջ այդր Դանիել Վարդապետի Շահնազարեանց յառաջնորդական տանն զհինգ անձինս վկայեալս ի ձէնջ արժանաւոր հանդամանօք ուսումնասիրութեան և ազգասիրութեան, որք են Աբրահամ Բէկն Մատթեանց, Համբարձում Աղայն Հախումեանց. պարոն Աբրահամն Խանդամիրեանց, պարոն Սարգիս Մատաթեանց և Նուխաքաղաքացի դերազնիւ Յովհաննէս Բէկն Էլչիբէկեանց առանձին կոնդակաւ մեր հաստատեցաք հոգաբարձու հոգևոր դպրոցին Շուշւոյ, յորում ունին ուսանել որդիք հոգևորականաց և ժողովրդականաց թեմին Ղարաբաղու և զհինգ անձինս փոխանորդ նոցա։ Եւ համաձայն խնդրանաց հոգաբարձութեանդ ի վերայ արդէն բացեալ բազմատեսակ աղբերաց և հաստատեալ յառաջագոյն ի Կոնսիստորիայէն ցուցակաւ յօգուտ հոգևոր դպրոցին Շուշւոյ՝ յաւելաք յայնս և զսրբադրամ արդիւնս, և զարդիւնս կրպակաց մոմավաճառութեանց բոլոր թեմի Ղարաբաղու, և տուաք նոցա զիրաւունս արդէն իսկ մշանջենաւորապէս ընկալնուլ զայնս ի տեսչութիւն իւրեանց։ Հրամանագրեցաք և Կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու յանձնել զայնոսիկ աղբիւրս արդեանց ի ձեռն հոգաբարձուաց, և պարտաւորեցաք զնոյն Աստեանն յամենայն դէպս չարգելուլ զօժանդակութիւն իւր հոգաբարձուաց հոգևոր դպրոցին, թէ՝ ի մասին ժողովման արդեանց և թէ՝ յայլ ինչ յայս վերաբերեալ ձեռնարկս նոցին։

«Այսու մերով Քահանայապետական կոնդակաւ աներկբայ յուսադրեմք զսիրելի հասարակութիւնդ թէ՝ ոչ անագան հանդերձեալ եմք առաքել ի վիճակն Ղարաբաղու զթեմական Առաջնորդ Եպիսկոպոս. և նա խորհրդակցութեամբ ընդ հոգաբարձուացն ունի զպակասորդացն հոգալ և մերս առաջարկել տնօրէնութեան, զոր և մեք խոստանամք հաստատել ի պայծառութիւն և ի ճոխութիւն տեղւոյդ հոգևոր դպրոցին։

«Ի վերջոյ մաղթելով ի Տեառնէ զհովանաւորութիւն երկնառաք շնորհաց և յաւիտենական ողորմութեան Աստուծոյ ի վերայ հոգևոր դպրոցին Շուշւոյ հարկադրեմք զամենասիրելի հասարակութիւնդ չխնայել յամենայն դէպս օժանդակութիւն ձեր կամաւոր նպաստամատոյց նուիրանաց ի հաստատութիւն և ի ճոխութիւն վերոյիշեալ դպրոցին յաղագս լուսաւորութեան հարազատ որդւոցս Գրիգորի Մեծի Նախահայրապետի և մերս նախամեծար պատրիարքական Մայր աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի»։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց։

Համար 321.

Ի 15 Յունիսի 1860 ամի. ի սբ. Էջմիածին։

Սակայն այս կոնդակի ստացվելուց յետոյ, Ղարաբաղի կոնսիստորիան և թեմի հոգևորականութիւնը բողոք են բառնում իրան Մատթէոս Կաթողիկոսին և Սինոդին վիճակային 14 աղբիւրները ուսումնարանին յատկացնելուն դէմ, ուստի և Սինոդը կաթողիկոսի ատենապետութեամբ քննելով բողոքը, իր օգոստոսի 27-ի 1860 թվի կայացրած օրագրի զօրութեամբ կարճում է արդիւնքների 7-ը և յատկացնում է դպրոցին միայն 7-ը, այն է 1, 2, 4, 5, 6, 7, 12 համարների տակ յիշվածները, մերժելով միւս 7-ը, որի թուումն են և կալուածները։ Սինոդը իր այդ մերժումը հիմնում է այն պատճառաբանութեան վրա, թէ Ներսիսեան ուսումնարանի պէս մի ամբողջ թեմական դպրանոց պահելու համար հարկաւոր է ունենալ աւելի հաստատուն միջոցներ, հարկաւոր է ապահովել դպրոցի վիճակը, որ նա կարողանայ անյողդողդ յարատևել. իսկ կալուածների մերժումը բացատրվում է նրանով, որ թեմի վանքերը բազմակարօտ և անշուք դրութեան մէջ են գտնվում և նոցա կալուածների արդիւնքները անբաւական են հոգալ նորոգութեան անհրաժեշտ պիտոյքը և միաբանութեան մնունդը։ Մի քանի եկամուտների մերժումն էլ պարզում է նրանով, որ նրանց սահմանումն հակառակ է եկեղեցու կանոնական օրէնքներին։ Իր այս վճռով Սինոդը կամենում է հասկացնել, որ մի դպրոց պահելու համար պէտք է դոնէ մի նշանաւոր ըբամագլուխ ունենալ և արդիւնքի մի երկու հաստատուն աղբիւր։ Ուստի երբ այդ վճիռը յայտնի է լինում Շուշու հայ հասարակութեան, նորից սկսվում են ժողովներ, լինում են խորհրդակցութիւններ, առաջարկվում են ծրագիրներ։ Վճռվում է. 1) հաստատել մի որոշ ըբամագլուխ, որը տայ տարեկան որոշ արդիւնքտոկոս, 2) կազմակերպել հոգևոր դպրոցը և դարձնել ճիշդ Ներսիսեան ուսումնարանի պէս 6-դասարանեան թեմական դպրանոց, անուանելով այդ դպրանոցը «Մատթէոսեան», 3) նորից միջնորդել յատկացնել մերժված 14 աղբիւրները և խոշոր վանքական կալուածները առնել հոգաբարձութեան տեսչութեան ներքոյ, համոզելով կաթողիկոսին, որ այդ աւելի արդիւնաբեր կը լինի և խոստանալով պահպանել վանքերը, նրանց միաբանութիւնները, հոգ տանել նրանց նորոգութեան վրա և միայն աւելացած արդիւն-

լու մասին, գործով չեն արդարացնում իրանց ասածները. քիչ էր մնում որ սիրողները զրկվեն փոքր ի շատէ օրինաւոր դահլիճից, որովհետև տեղիս ակումբի երկու ստաբշինանները (որոնք մի և նոյն ժամանակ ընկերութեան անդամներն են) մերժում էին տալու դահլիճը, առարկելով թէ իրանք մի—երկու երեկոյ զրկվում են զուարճութիւնից՝ դահլիճում թուղթ խաղալու, մանդալու կամ ծխելու և այլն... Ինչպէս տեսնում է ընթերցողը, պարոնները շատ հեռու չեն գնում իրանց անձնականից: Հէնց չնորհով այդ պարոնների էլ չէ կարելի տալ երկրորդ ներկայացում, որի համար սիրողները պատրաստութիւններ էին տեսնում: Ներկայացումից զուտ արդիւնք մնաց 140—150 բուբլի:

***

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՑ

—

Օգոստոսի 8-ին

Անցեալներում «Մշակ» լրագրի միջոցով յայտնել էի, թէ այս տարի Զանգեզուր գաւառում հացը պակաս կը լինի: Գրածս այժմ իրականութիւն ստացաւ, չնորհով անընդհատ անձրևների, հեղեղների և խորշակի: Ուրախալին այն է, որ կորեկը չափազանց առատ հունձ է խոստանում: Շուանիձոր, Մանդև, Ալիդարայ, Մեղրիի և վերջնոյս շրջակայ գիւղերում խաղողին սաստիկ թող է տուել: Այս տարվայ գինին անցեալ տարվայ գինու մի տասներորդական մասը կը բաղկացնէ: Աղքատ մեղրեցու ապրուստի միակ յոյսը բամբակն էր, բայց երէկ, դիշերվայ ժամի 9-ին եկած մինչև այժմ չը տեսնված հեղեղը, մի ժամվայ ընթացքում փչացրեց դեռահաս արտերի բամբակը: Մի կողմ թողնելով մայիս և յունիս ամիսների Մեղրիի հասարակութեան կրած վնասները, վերջին անդամի վնասը հասնում է 50,000 բուբլու: Ինչ անէ, ինչով ապրէ անճար մեղրեցին, որի ամբողջ տարվայ հունձը առնովի է, երբ խաղողին թող է տուել, և բամբակի արտը հեղեղն է փչացրել:

Ինչպէս ամենայն տարի, նմանապէս և այս տարի Վարդավառի տօնին շատ հայ և թուրք ուխտաւորներ էին գնացել Խուստուփ (Մեղրիի դաւառում): Պատարագ մատուցանողը եղել է մերձակայ Հանդ գիւղի Գրիգոր քահանան:

«Կապոյտ հաղ» ասված հիւանդութիւնը թէպէտ բոլորովին չէ վերջացել Մեղրիի շրջակայ գիւղերում, այնու ամենայնիւ բաւական թեթևացել և մինչև անդամ անվնաս է դարձել այժմ:

Այսօր վաղը սկսվելու է առաջիկայ ուսումնական տարին, բայց Մեղրիի զպրոցի հոգաբարձութիւնը դեռ ոչ մի ուսուցիչ չէ վարձել մինչև օրը, իսկ հոգաբարձութեան կողմից միամտված հասարակութիւնը խոր քնով է քնած:

Մեղրիի գետակի մէջ թափվող Լիճքուաղի վրակի վրա գտնվում է Բուղաքար անունով թուրքաբնակ գիւղը, որը բաղկացած է 15 ծխից: Մի տարվայ ընթացքում այդ գիւղի մէջ գժվել են քսան հոգի: Մոլեռանդ ժողովուրդը դիմել է մի դրբաց մօլլայի դժերին բժշկելու: Վերջինս մի քանի օր է, որ այցելել է յիշեալ գժանոց գիւղը և խոստացել է բոլոր «քաջքերին» բռնելու, որոնք գտնվում են, նրա ասելով, հիւանդների ուսկորների մէջ և բաղկացած են ամեն աղդերից: Մօլլան մեծ վարձ է ստացել գժատէրերից:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԿԱԽԻՑ մեզ գրում են: «Ահա մօտենում է սեպտեմբեր ամիսը, ամեն կողմերից լսում ենք որ հայաբնակ քաղաքներն ու գիւղերը հոգում են իրանց ուսումնարանների վրա, վարձում են ուսուցիչներին ու վարժուհիներին, իսկ մեր Կախի հայերը կարծես քնած լինեն: Վաթսունի չափ երեխաներ թափառում են փողոցներում, առանց ուսման, առանց խնամատարութեան: Երէկ մեր ծնողներին աւելի հաճելի են իրանց որդկերանց փողոցային, կինտօյական հայհոյանքը, քան թէ ուսումը: Մինչ Կախի հայերը ուրախ կը լինեն, որ իրանց զաւակներից դուրս գային Մօլլա-Բարիմներ և Բարամներ:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեր թղթակիցը մեզ գրում է: «Նորութիւնը, որը ամբողջ Բաղուի խօսակցութեան առարկայ է այս բօպէիս, այդ Տէր-Յակոբեանցի Բալախանում բացված նաւթային հորն է: Դեռ ոչ ոք չէ յիշում որ այդ կողմերում նաւթի յայտնված օրից երբ և իցէ բացված լինէր մի այդպիսի շատրուան: Եղել են, ճիշդ է, այնպիսիներ, որոնք օրական աւելի քան 100 հազար պուդ նաւթ էին արտավիժում, նոյն իսկ 20—25 սաժէն բարձրութեան վրա խփելով, բայց այդ բոլորը տեւել է շատ շատ մի քանի շաբաթ և այդպիսի ուժեղ արտահոսումը վնասել է նոյն իսկ ֆոնտանի կանոնաւորապէս շարունակվելուն, իսկ շատ դէպքերում նոյն իսկ վերջ է տուել նաւթի արտահոսման: Տէր-Յակոբեանի հորը, որպէս պատմում էին, արտավիժում է օրական մօտ 80,000 պուդ և նաւթը հոսում է ամենայն առատութեամբ և կատարեալ հանդարտութեամբ արդէն վեց ամիս շարունակ, առանց ամենափոքր դանդաղութեան: Կարծում են, որ այդպէս էլ կը շարունակվի: Ասում են որ Տէր-Յակոբեան օրական մօտ 2000—2,500 բուբլու նաւթ է ծախում, այնպէս որ տարեկան մի միլիօն բուբլի եկամուտ կունենայ: Առանց որ և է նեղութեան, առանց ամենափոքր աշխատանքի, երկրի խորքից տարեկան մի միլիօն ալէնսիա ստանալ,—դա այնպիսի մի հարստութիւն է, որին անշուշտ ոչ թէ միայն բաղուցիք, բայց նոյն իսկ եւրօպացիք ու ամերիկացիք էլ կարող էին նախանձել:»

—

«Медицинская Бесѣда» չաբաթաթերթում կարդում ենք, որ Սիբիրի Տօմսկ քաղաքում նոր բացված համալսարանում վճռված է ընդունել հրէայ ուսանողներին 5% թով, այսինքն 100 ուսանողների վրա միայն 5 հոգի հրէաներից:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Օգոստոսի 15-ին մահմէտականների բայրամի տօնին, Բաղուի թուրքաբնակ փողոցների վրա մարդու ուշադրութիւնը գրաւում էր մի արտասովոր տեսարան. թուրք ամբոխը խմվելով, խռնվելով հարուստ թուրքերի տների առջև, անասելի աղմուկ-աղաղակներով և իրար սեղմելով պարդևներ էին պահանջում հարուստներից: Ամեն տների դռները հերթով բօպէապէս բացվում էին և հարուստների ծառաները դուրս էին դցում ամբոխին կամ մի քանի արշին չիթ, կամ մի աղլուխ և այլն: Հարիւրաւոր ձեռքեր բարձրանում էին միմեանցից խլելու այդ ընծաները: Մինչև երեկոյ ամբոխը չէր հեռանում. ոստիկանութիւնը անզօր էր կարգ դցելու դրդռված ամբոխի մէջ: Ամբոխի միջից մի քանի մարդիկ ու կանայք բաւական ջարդ ստացան:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են օգոստոսի 16-ից հետևեալը: «Մեղանում շոք եղանակները մեղմացել են: Քաղաքի չինովնիկներից շատերը դեռ չարունակում են ներկել և կարդի բերել: Ամարանոց գնացածները փոքր առ փոքր վերադառնում են քաղաքը և Բաղուն կարծես թմրած դրութիւնից զարթնում է և կենդանանում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՐՈՂԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

—

Միացեալ-Նահանգների նախագահի ժամանակը անցնելու մօտ է, և այդ պատճառով այնտեղ ընտրողական գործողութիւնները սկսված են՝ նոր նախագահ ընտրելու համար: Գիտակցական կուսակցութիւնների այդ հարաստ հայրենիքում՝ գաղափարի և ազիտացիայի տաք կռիւ է մղվում նախագահի անձնաւորութեան վերաբերութեամբ: Գլխաւոր և ամենակատաղի կռիւը տեղի է ունենում երկու մեծ կուսակցութիւնների մէջ, այն է ռամկապետականների և հանրապետականների մէջ: Դրանցից իւրաքանչիւրը ունի իր թեկնածուն, որի ընտրութեան համար և այժմ գործում են: Ռամկապետականների թեկնածուն Կլիվելենդն է, որը հէնց այժմ նախագահի պաշտօնումն է, ինքը ռամկապետական է, և ռամկապետական կուսակցութեան աչքի ընկնող ոյժն է կազմում: Հանրապետական կուսակցութիւնը մի քանի թեկնածուներին առաջ մղելուց յետոյ, այժմ կանգ է առել Գարֆիլդի վրա:

Ի նկատի ունենալով Միացեալ-Նահանգների առևտրական և ֆինանսական պայմանները և տրամադրութիւնը, հիմք կայ կարծելու, որ յաղթութիւնը ռամկապետականների կողմը կը լինի և Կլիվելենդ նորից կընտրվի նախագահ, եթէ որ և է նոր արգելառիթ պատճառ առաջ չը գայ: Մենք ասում ենք առևտրական և ֆինանսական պայմաններ,—և այդ էլ այն պատճառով, որ այդ երկու թեկնածուների ընտրութեան հիմքը շատ նշանաւոր խնդիր է, և անմիջական կապ ունի Միացեալ-Նահանգների ազատ առևտրի և մաքսահարկերի խնդրի հետ:

Ինչպէս ուրիշ անդամ էլ. առիթ ենք ունեցել ասելու, Կլիվելենդ և իր կուսակցութիւնը ազատ առևտրի և մաքսահարկերի եթէ ոչ առ այժմ բոլորովին ոչնչացնելու, գէթ շատ սահմանափակելու կողմն են կանգնած: Հանրապետական կուսակցութիւնը ընդհակառակը պրօտեկցիօնիզմի ըսկզբունքի վրա է կանգնած, և այն կարծիքն է պաշտպանում, որ Կլիվելենդի և նրա կուսակցութեան բոլոր հիմունքները, որոնք վերաբերում են ազատ առևտրին և փոխանակութեան, կը վնասեն Ամերիկայի առևտրին և արդիւնաբերութեան, ստեղծելով նրա համար զօրեղ մրցողներ:

Պրօտեկցիօնիզմի այդ սիստեման, որ այժմ մեծ դործադրութիւն է գտել շատ երկիրներում և որը՝ դիտութեան հիմնաւոր փաստերի զօրութեամբ այժմեան տնտեսական ճգնաժամի ամենադլխաւոր պատճառներից մէկն է, ռամկապետականների կողմից ահագին դիմադրութեան է հանդիպում, և հէնց այդ նշանաւոր խնդրի շուրջն է պտտում այժմեան ընտրութիւնների գլխաւոր կռիւը: Հանրապետականները ճշմարիտ է Գարֆիլդին չեն վերաբերում, գործով չեն արդարացնում իրանց ասածները. քիչ էր մնում որ սիրողները զրկվեն փոքր ի շատէ օրինաւոր դահլիճից, որովհետև տեղիս ակումբի երկու ստաբշինանները (որոնք մի և նոյն ժամանակ ընկերութեան անդամներն են) մերժում էին տալու դահլիճը, առարկելով թէ իրանք մի—երկու երեկոյ զրկվում են զուարճութիւնից՝ դահլիճում թուղթ խաղալու, մանդալու կամ ծխելու և այլն... Ինչպէս տեսնում է ընթերցողը, պարոնները շատ հեռու չեն գնում իրանց անձնականից: Հէնց չնորհով այդ պարոնների էլ չէ կարելի տալ երկրորդ ներկայացում, որի համար սիրողները պատրաստութիւններ էին տեսնում: Ներկայացումից զուտ արդիւնք մնաց 140—150 բուբլի:

***

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՐՈՂԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

—

Միացեալ-Նահանգների նախագահի ժամանակը

քը յատկացնել թեմական դպրանոցին, 4) խմբագրել դպրանոցի կանոնադրութիւնը և առաջարկել ի հաստատութիւն:

Այդ հիման վրա անմիջապէս բացվում է ստորագրութիւն. ամբողջ Շուշու հայ հասարակութիւնը հրաւիրվում է մի նուիրաբերութիւն անել դպրանոցի դրամագլուխը կազմելու համար: Ժապավենաձև և կնքաձև մատեան է կազմվում և մի քանի ամսվայ ընթացքում ստորագրվում են համարեա բոլոր ունևոր շուշեցիները որը 1,000, որը 500, որը 100, որը 50, 25, 10, 5: Ստորագրութիւնը սկսվում է 1861 թ. մարտի 1-ին, և երբ վերջանում է, հասնում է 14,729 բուբլի միանուագ, և 2,367 բուբլի տարեկան, այն է Շուշու հայ հասարակութիւնը պարտաւորվում է միանուագ՝ անմիջապէս, երբ դպրանոցի կանոնադրութիւնը հաստատվի և վանքական կալուածները յանձնվեն հոգաբարձութեան ձեռքը ու մերժված եկամտի 14 աղբիւրները յատկացվեն՝ տալ 14,729 բուբլի փող և իւրաքանչիւր տարի ևս 2,367 բուբլի: Այդ մատեանը ստորագրում են բոլորը, վաւերացնում է հոգաբարձութիւնը. շատերը ևս անչարժ կայքեր են կտակում—տուն, կրպակներ, և այլն:

Սակայն ստորագրված դումարները իսկոյն չեն վճարում, սպասելով տեսնել թէ արդեօք կընդունվի Էջմիածնից իրանց առաջարկելի պայմանները, այն է կը յատկացվեն եկամտի 14 աղբիւրները և կը հաստատվի կանոնադրութիւնը, այլ ամեն ստորագրող իր ստորագրած դումարի համար տալիս է օրինաւոր պարտամուրհակ:

Այնուհետև կազմվում է դպրանոցի կանոնադրութիւնը, բաղկացած 85 յօդուածներից. դրբիաւոր կէտերն այստեղ առաջ ենք բերում.

Յօդ. 1) «Մատթէոսեան» հոգևոր ուսումնարանի նպատակն է պատրաստել Հայաստանեայց եկեղեցու համար արժանաւոր պաշտօնեաներ և հասարակութեան համար լուսաւորեալ անդամներ:

2) Տէր դպրոցին է ինքն վեհ. կաթողիկոսն ամենայն հայոց:

3) Դպրոցի կառավարութիւնը յանձնված է դպրոցի կառավարութեան ժողովին, որ բաղկացած է դպրոցի 5 հոգաբարձուներից և դպրոցի տեսչից, ընդ նախագահութեամբ վիճ. առաջնորդի:

4) Հոգաբարձուների պարտաւորութիւնն է կառավարել դպրոցի արդիւնքները և նրա ամենայն տնտեսական մասը, հոգալ դպրոցի բարեկարգութեան և որդեդիրների ու բոլոր աշակերտների բարօրութեան համար թէ հագուստի, թէ կերակրի, թէ բնակութեան մասին և ջանալ դպրոցի արդիւնքները աւելցնել:

20) Դպրոցի կառավարութեան խորհուրդը չինում է ամեն տարվայ համար առաջուց դպրոցի ծախսի նախագաղափարը (սմետա), որն որ հաստատում Սինոդը:

22) Դպրոցի արդիւնքներն են վեհ. կաթ. 1859 թ. № 321 կոնդակով հաստատած եկամտի 12 աղբիւրները (տես վերևում):

25) Շուշու հոգևոր դպրոցը բաժանվում է 3 մասը. ա) Նախապատրաստական. բ) Իսկ դպրոց, և գ) Յատկապէս հոգևորական մասը:

26) Նախապատր. մասը կազմում են Շուշու քաղաքի և առհասարակ ամբողջ Ղարաբաղու վիճակի մասնաւոր (ծխական) ուսումնարանները, որոնք որ եկեղեցիներու մօտ սարքված կը լինեն:

31) Դպրոցը կազմված է 6 դասարանից, որոնց մէջը դաս են տրվում հետևեալ դպիրներ: Դրանք մինչև քահանայ ձեռնադրվելը մնալով Շուշու դպրոցում, ստանալով կերակուր, բնակարան, հագուստ, պիտի իրանց կատարելագործեն հոգևորական գիտութեանց մէջ և նրանց զբաղմունքը պիտի լինի. ա) քարոզներ, որ յարմար օրերումն պիտի կարդան եկեղեցիներումն, բ) հայոց լեզուի, հայոց դրականութեան և հայոց պատմութեան պարապմունք, գ) աստուածաբանական պարապմունք, դ) ուսուցչութիւն մասնաւոր (ծխական) դպրոցներում ռոճիկով:

46) Դպրոցի աշակերտները լինում են. ա) Ներքին աշակերտներ, որոնք կենում են դպրոցի մէջ և ստանում են հագուստ, կերակուր և ուսման պարագայքը. որոնց մէկ մասն են դպրոցի որդեդիրները, որոնց թիւը առայժմ 12 կը լինի, աղքատ քահանաների զաւակներից. միւսները թոշակաւորներ են, որոնք վճարում են տարեկան 120 բուբլի:

61) Դպրոցի մէջ ուսում աւարտող աշակերտներից երկուսը ամենից լաւերը դպրոցի հաշուով ուղարկվում են համալսարան, տարեկան 400 մանէթ ստանալով, այն պայմանով, որ նրանք հաճալսարանական ուսումն աւարտելուց յետոյ 6 տարի ծառայեն Շուշու հոգևոր դպրոցին, ստանալով ռոճիկ:

76) Դպրոցը ունի հիւանդանոց 10 մահճակալի, տարեկան բժիշկ և հիւանդանոցի վերատեսուչ:

77) Դպրոցը ունի դրատուն, դրավաճառանոց, հանդերձատուն:

(Կը շարունակվի)

դրադրութիւնները և լեզուները—

Ա) Դասատան մէջ—սրբազան պատմ. թուաբան., աշխարհագր., հայոց և ռուսաց լեզուներ, վայելչագրը., եկեղեցական երգեցող.

Բ) դասատան մէջ—նոյնք և թուրքի լեզու, նրկարչութիւն:

Գ) դասատան մէջ—նոյնք և քրիստոնէական վարդապետութիւն, ընդհանուր և հայոց պատմութիւն, թուրքի և ֆրանսուզի լեզուներ:

Դ) » —Քրիստոնէական վարդապետութիւն, աշխարհագր., ալդեբրայ և երկրաչափութիւն, ընդհանուր և հայոց պատմ., հայոց, ռուսաց, թուրքի, ֆրանսուզի և լատինի լեզուներ:

Ե) » —Եկեղեցական պատմ. ալդեբրա, երկրաչափ., աշխարհագր., ընդհանուր և հայոց պատմ., բնական դիտութիւն, հայոց, ռուսաց, ֆրանսուզի լեզուներ:

Զ) » —Աստուածաբան., եռանկիւնաչափութիւն, աշխարհագր., ընդհանուր, հայոց պատմ., բնական պատմ., հայոց, ռուսաց, ֆրանս. լեզուներ, նկարչ. և երգեցողութիւն:

34) Յատկապէս հոգևորական մասը կազմում են դպրոցի այն աշակերտները, որոնք որ դպրոցի մէջ իրանց ուսումը աւարտելուց յետոյ կը յայտնեն յօժարութիւն հոգևորական կոչումն ստանալու և կը կոչվին նորընծայ դիտուն

բաղրում տնտեսագիտական յեղափոխական մեծ ձգտումներ և յատկութիւններ, բայց նրանք այն կարծիքն են յայտնում, որ Գարրիսոնի նախնիքները եղել են ընդունակ գործիչներ, մեծ ծառայութիւն են մատուցել երկրին՝ և անկասկած նրանց այժմեան ներկայացուցիչը կարող կը լինի օգտաւէտ լինել Միացեալ-Նահանգներին։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նախնիքների արած մեծ գործերը դժուար կարող են մեծ դարկ տալ Գարրիսոնի ընտրութեանը, և Միացեալ-Նահանգների պետական ֆինանսների ծաղկած դրութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից ռամկապետական կուսակցութեան դաւանած սկզբունքները մեծ ոյժ կը տան այդ կուսակցութեան թեկնածուի ընտրութեանը, այն է Կլիվելենդի նորից նախագահ դառնալուն, որը, ի դէպ ասել, իր անցեալ պաշտօնավարութեան միջոցին՝ ցոյց տուեց և վարչական մեծ տաղանդ, և տնտեսագիտական յեղափոխութիւնների մեծ ձգտում, և ամենքին լաւ յայտնի անկողմնապահութիւն։ Այդ գովելի յատկութիւնները անկասկած շատ հաւանական են դարձնում Կլիվելենդի նորից ընտրութիւնը, որը շատ ցանկալի է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱ-ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Դատական և Կրօնական գործոց նախարարութիւնն օգոստոս 9 թուականաւ շրջաբերական մ'ուղղած է ընդհանուր դատախազներուն ի մասին այն դատավարութեան եղանակին որում պարտին հետեւիլ կղերականներ ի դատ կոչելու և դատելու առթիւ։ Ցոյն լրագիրը այդ շրջաբերականի մի ամփոփումն հրատարակած են որ հետեւեալն է.

«Այն քահանայք և կրօնաւորք որք ի դատ կը կոչուին քաղաքային կամ պատժական գործոց համար և կամ եղեռնական դատի մը մէջ իբր վկայ լսուելու համար, պիտի հրաւիրուին այն եկեղեցական իշխանութեան միջոցաւ որոյ իրաւասութեան ներքև կը գտնուին։ Կոչնագիրք պիտի ղրկուին այդ իշխանութենից և դատարանին ներկայանալու համար տրուած պայմանաժամն պիտի հաշուի այդ կոչնագրոց եկեղեցական իշխանութեան հաղորդուած օրէն։ Հոգևոր պետերն իրաւունք չը պիտի ունենան որ և է առարկութիւն մատուցանելու և կամ դատական դիմում ընելու այդ դատին վերաբերեալ։ Եթէ հրաւիրեալ քահանայն կամ կրօնաւորն որոշեալ օրին դատարան չը ներկայանան, դատարանն ի բացակայութեան պիտի վճռէ և ըստ այնմ օրինաց տրամադրութիւնն ի գործ պիտի դրուի։ Ոճրագործութեամբ ամբաստանեալ կամ ոճիր մը գործած միջոցին ձերբակալեալ քահանայք կամ կրօնաւորք պիտի բանտարկուին առանց միջամտութեան իրենց հոգևոր պետերուն, և յետ անոնց բանտարկութեան միայն եկեղեցական իշխանութեանց պիտի զեկուցուի ձերբակալեալ քահանային կամ կրօնաւորին անունն։»

«Արևելք» լրագիրը իր վերջին համարներից մէկում հաղորդում է հետեւեալը. «Բալուէն Աղդ. Պատրիարքարանի և Դատական նախարարութեան ուղղեալ կրկին հեռագրեր կը ծանուցանեն թէ քաղաքին նշանաւոր աղդայիններէն Մ. Յովհաննէս էֆէնտի Տ. Գէորգեան՝ Քէշիշեան մի քանի չարագործաց կողմէ դաւադրութեամբ խընջոյքի հրաւիրուելով Արածանի գետոյն եզերաց պարտէզներէն միոյն մէջ, չարաչար կը սպաննուի անդ և գետը կը նետուի։ Սպանելոյն մայրն ալ Քարբերդէն հեռադիր մը ուղղած է յԱղդ. Պատրիարքարան, ինչպէս և Քարբերդի Գեր. Առաջնորդն ալ հեռադրաւ խնդրած է՝ ուշադրութեան առնուլ սոյն քստմնելի ոճրագործութիւնը։ Մ. Յովհաննէս էֆէնտի Տ. Գէորգեան 38 տարեկան անձ մ'էր, քաջ տաճկագէտ և օրէնսգէտ, և երկար ժամանակ կարևոր անդամակցութիւն ունենալով կառավարական ժողովոց մէջ, օգտակարապէս ծառայած է Տէրութեան շահուց։ Բաց ասա՛ի, Աղդային ժողովներու մէջ թէ ատենադրութեան և թէ ատենապետութեան պաշտօնով ազգին կը ծառայէր երկար տարիներէ հետէ, կարևոր մասնակցութիւն մ'ունենալով ազգային և կրթական ամեն գործոց ու հանդամանութեանց մէջ։ Իւր մահ մեծ կորուստ մ'է Բալուայ համար։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 9 օգոստոսի

Թրքաց իսլամ պայրամի առթիւ կառավարական գործունէութիւնը դադրած է, հետեւաբար մեր Պատրիարքարանէն ալ չեն փութար պատասխանել դատական գործոց նախարարութեան թելադիրներին. այդ յապաղումը հաւանօրէն ապագայի ինչասակար պիտի լինի, քան թէ օգտակար. Սիմոն պէյ այժմ արամադիր չէ դատական գործոց նախարարութեան խրկել այն պատասխանը, զոր արդէն պատրաստած էր Խան Ժողովը, այլ կուզէ աւելի հաճոյական պատասխան մը խրկել. մենք արդէն առաջին գրուած պատասխանը օգտակար չէինք համարեր, իսկ այժմու գաղափարներն աւելի դատապարտելի են. թուի թէ այլ և այլ ազդեցութեանց ներքև Սիմոն պէյ կը փափագի բացարձակապէս խոստովանել, որ Սահմանադրութեան հակառակ գործողութիւններ ըրած ենք, մինչդեռ աւելի բնական է թոյլ տալ, որ Դուռը ինք մեզ յայտարարէ թէ ինչ յանցանք ունենք։ Չենք կարծեր, որ Խան Ժողովը համաձիտ լինի Սիմոն պէյի, և հաւանական ալ է, որ Սիմոն պէյ՝ աւելի զդոյշ և աւելի խոհեմ լինելու հարկն զգայ և նորանոր խնդիրներով ազգային գործերը խանգարել տալու պատճառ չըլլայ։

Կը լսուի նաև թէ Սիմոն պէյ յայտարարած է, որ օգոստոսի 18-ին, կայսեր դահակալութեան տարեդարձին առթիւ, ներողութիւն պիտի տրուի թէ Հայաստանի զանազան կողմերն բանտարկեալ հայոց և թէ Ափրիկեան Տրիպոլիս աքսորեալներուն։

Այս կիրակի օր, օգոստոսի 6-ին, Պոլսոյ հայհռոմէական եկեղեցիներու մէջ կարդացուեցաւ Պապին մէկ կոնդակը, որ զանազան տեսակէտներով յոյժ կարևոր է։ Կոնդակը արժանավայել լեզուաւ գրուած է, հայոց վրայ գովեստիւք կը խօսի, և հայոց ընդհանուր կաթոլիկութեան հետ միանալուն փափագ կը յայտնէ, պատմական տեսակէտներ առաջ բերելով։ Լատիներէն և հայերէն տպագրուած է այդ կոնդակը և երէկ այսօր կը բաժնուի այն անձանց, որոնց պէտք էր խրրկել։ Այս առաւօտ ընդունած լինելով, կարող չեմ ընդարձակ կերպով խօսիլ հիմա։ Այդ կոնդակն Հռոմէն բերած է Ֆերաճեան եպիսկոպոս, որ մասնաւորապէս խրկուեցաւ Պոլսէն և երեք անդամ տեսակցութիւն ունեցած է Պապին հետ։

Նախորդ նամակաւ գրած էի Բերայ կալուածական խնդրոյ մասին. ժողովրդային յուզման հանդէպ այդ խորհրդի գործադրութիւնը ետ մընաց։

Տիկին Մատակեան անհամաձայն լինելով Նուբարեան էֆէնդիի հետ, հրաժարած էր Աղջկանց Ուրուսատանոցի տեսչութիւնէն. այժմ տիկինը մտադիր է բանալ Պոլսոյ Գատը-զիւղ թաղի մէջ մանկական պարտէզ մը, որ բոլորովին նորութիւն մ'է Պոլսոյ համար։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինի կիսապաշտօնական «Post» լրագիրը մի առաջնորդող յօդուած է նուիրել գեներալ Բուլանժէի ընտրողական աջողութիւններին։ Այդ յօդուածում «Post» շատ պարզ կերպով ակնարկում է այն բանի վրա, որ Բերլինում սկսում են անզգոյշ համարել այժմեան ֆրանսիական կառավարութիւնը և որ Բուլանժէի վերջնական յաղթութիւնը Բերլինում ուրախութեան զդացմունքով կընդունեն։ «Post» լրագիրը ապացուցանում է, որ ինչ էլ որ ասեն, ինչքան էլ քննադատեն գեներալ Բուլանժէին և ծաղրեն նրան, այդ այնպիսի մի ոյժ է, որի հետ հարկաւոր է հաշիւներ տեսնել։ Միայն մի միջոց կը փրկէ այժմեան հանրապետութիւնը, և այդ միջոցը հանրապետական բոլոր կուսակցութիւնների միանալն է։ Բայց, ի հարկէ, չէ կարելի յուսալ, որ այդպիսի մի միութիւն իրագործվի, և այդ պատճառով Ֆրանսիայի մօտիկ ապագան անյայտ է մնում։

—«Corresp. de l'Est» լրագրի Սկուտարիից ստացած տեղեկութիւնների համեմատ, այնտեղի լեռնականները և թիւրքաց ազդաբնակութիւնը հեռագրով դիմեցին Բ. Դրանը, խնդրելով արձակել պաշտօնից անընդունակ փոխ-նահանգապետին և պաշտպանել իրանց միրիդիտների դէմ։ Անէսիօում զօրքեր են ուղարկված։ Վախենում են միրիդիտների արշաւանքներից։

—Փարիզի «Matin» լրագիրը հաւատացնում է, որ իբր թէ գեներալ Բուլանժէ գաղտնի կերպով խորհրդակցում էր պրինց Վիկտոր Նապոլէօնի հետ։

—Լրագիրներին Բուխարէստից հեռագրում են, որ բումինական զօրքերում ապստամբութեան նշաններ են երևում։ Մի քանի օֆիցէրներ կալանաւորված են։

—«Kölnische Zeitung» լրագիրը խօսելով Բուլանժէի աջողութիւնների մասին, ասում է հետեւեալը. «Բանը նրանումն է, որ այժմ դոյութիւն ունեցող պայմանների ժամանակ, գեներալ Բուլանժէի կառավարութիւնը Ֆրանսիայում այժմեան ֆրանսիական կառավարութիւնից վատ չէր կարող լինել Գերմանիայի համար, որովհետև, այժմեան ֆրանսիական կառավարութիւնը, Ֆրանսիայի շահերը չը չօշափող մի ամենադատարկ հարցի պատճառով պատրաստ է կռիւ սկսել Գերմանիային դաշնակից մի պետութեան դէմ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի։ «Гражданинъ» լրագրին յայտնված է առաջին նախազդուշութիւն այն բանի համար, որ առհասարակ իր բարենպատակ ուղղութեան հետ միասին, լրագիրը թոյլ է տալիս իրան չափազանց անքաղաքավարի կարծիքներ յայտնել կառավարութեան գործողութիւնների և կարգադրութիւնների և պետական բարձրագոյն հիմնարկութիւնների մասին, այդպիսով արհամարհանք ներշնչելով դէպի նրանց։— Յայտնի ճանապարհորդ Պրժէվալսկի երէկ գնաց իր հինգերորդ ճանապարհորդութիւնը կատարելու կենտրօնական Ասիայում։ Պրժէվալսկի, ի միջի այլոց, փորձ կը փորձի մտնել Լաս—Տիբէթի մայրաքաղաքը։ Աշնանը պետական խորհրդին կառաջարկվի նաւահանդստային տուրքերի և շինութիւնների նախագիծը։

ԲԵՐԼԻՆ, 19 օգոստոսի։ Բէյխստագի այստեղի լրացուցիչ ընտրութիւններին ընտրված է սոցիալիստ Լիբկնէխտ։

ՊԻՐՈՏ, 19 օգոստոսի։ Սոֆիայում կալանաւորված են 50 մարդիկ, որոնք մեղադրվում են դայդուկներին պաշտպանելու մէջ։ Կալանաւորվածները խիստ դանակոծութեան ենթարկվեցան։

ԼՕՆԴՕՆ, 19 օգոստոսի։ Ֆրանսիան և Էլի մի քանի պետութիւններ հրաժարվեցին ստորագրել շաքարային դաշնագիրը, մինչև որ բոլոր հետաքրքրված պետութիւնները իրանց հաւանութիւնը չեն տայ։

ԲԵԼԳՐԱԴ, 20 օգոստոսի։ Դաւանութիւնների մինիստրը հոգևոր վարչութեանը մի շրջաբերական ուղարկեց, որով առաջարկում է այլ ևս ոչինչ մաղթանքներ չը կատարել Թագուհու ծնընդեան տարեդարձին։—Պիրօչանցի ձեռքով կօնսիստորիային ներկայացրած Թագուհու յայտարարութիւնը շատ հաշտ ոգով է գրված։ Թագուհին յայտ է յայտնում, որ իր օգոստափառ ամուսինը բաւական մեծահոգի է ըստ արժանոյն դնահատելու իր խաղաղասիրական ձգտումը։ Այդպիսով կրկին հաշտվելու յոյս է ծագել։ Կօնսիստորիայի նիստը կը կայանայ այսօր երեկոյեան, իսկ վաղը կը յայտնվի վճիռը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի։ Հրատարակված է լեհական թագաւորութեան նահանգների զէմստվօների փոխատու ընկերութիւնների կանոնադրութիւնը։

ԳՄՈՒՆԴԷՆ, 20 օգոստոսի։ Թագուհի Կայսրուհին միւս բարձրագոյն Անձանց հետ միասին բարեհաճեց երէկ ներկայ գտնվել «Սաբինուհիներ» յատիշտակութիւն անունով ներկայացմանը։ Նորին Մեծութեան և Ուէլսի իշխանուհու դալան թատրոնի առաջ ահագին բազմութիւն էր սպասում։ Թագուհի Կայսրուհուն և Ուէլսի իշխանուհուն դիմաւորեցին բուրգոմիստրը և թատրոնի դիրեկտորը։ Պիէսան շատ լաւ կատարեցին։

ԳՄՈՒՆԴԷՆ, 20 օգոստոսի։ Այսօր Ֆրանց-Յովսէփ կայսրը ժամանեց Գմունդէն այցելութիւն անելու Թագուհի-Կայսրուհուն։ Կայսրին կայարանում դիմաւորեցին Թագաժառանգը և Կումբերլանդեան դուքսը։ Կայսրը ռուսաց համազգեստով էր, իսկ Թագաժառանգը—աւստրիական։ Թագուհի Կայսրուհին դուրս եկաւ Կումբերլանդեան ամրոցի սանդուղքի վրա դիմաւորելու Կայսրին։ Մէկ ժամին կէսօրից յետոյ կայացաւ ընտանեկան ճաշ, իսկ ժամ 3-ին աւստրիական կայսրը ճանապարհ ընկաւ Գմունդէնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի։ «Новое Время» լրագիրը լսել է, որ Սամարա-Ուֆիմեան երկաթուղու բացումը կը կայանայ սեպտեմբերի 8-ին ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի ներկայութեամբ։

ԲԵԼԳՐԱԴ, 21 օգոստոսի։ Թագաւորը կօնսիստորիային առաջարկեց երեք ամսով յետաձգել իր ապահարզանի գործի քննութիւնը։

ՏՈՒԼՕՆ, 21 օգոստոսի։ Քաղաքային խորհրդի տուած բանկէտի ժամանակ Ֆլօկէ մի ճառ արտասանեց, որի մէջ հանրապետականներին խորհուրդ էր տալիս միանալ, ի նկատի ունենալով միապետութեան վերականգնումն և բաղդախնդրական դիկտատուրան։

ՎԻԷՆՆԱ, 21 օգոստոսի։ Էրցհերցոգ Կարլ-Լիւդվիգ և նրա ամուսինը այսօր կէսօրից յետոյ Բերլին վերադառնալով, այսօր երեկոյեան և եթ գնում են Պրէրաու դիմաւորելու այնտեղ վաղը առաւօտեան Գմունդէնից ժամանող Թագուհի կայսրուհուն, Թագաժառանգին և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնային։ Պրէրայում կէս ժամ մնալուց յետոյ, ռուս Բարձրագոյն Անձինքը կը շարունակեն իրանց ճանապարհը դէպի Ռուսաստան, իսկ Էրցհերցոգը և նրա կինը կը վերադառնան Վիէննա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի։ Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրօվիչ երէկ երեկոյեան Իկինսկոյից ճանապարհ ընկան Պետերբուրգ։

ՎԻԷՆՆԱ, 22 օգոստոսի։ Շաբաթ երեկոյեան Թագուհի Կայսրուհին, Թագաժառանգը և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնա Գմունդէնից ճանապարհ ընկան դէպի Պետերբուրգ։ Բարձրագոյն Անձանց ուղեկցեցին մինչև երկաթուղու կայարանը՝ հանձնավէրեան Թագուհին, Հանձնավէրեան իշխանուհի Մարիա, Կումբերլանդեան դուքսը և Ուէլսի իշխանուհին իր դուստրներով։ Երէկ երեկոյեան, Պրէրաու կայարանի միջով անցնելու ժամանակ, Թագուհի Կայսրուհուն դիմաւորեցին էրցհերցոգ Կարլ-Լիւդվիգ և նրա ամուսինը, որոնք ուղեկցեցին Նորին Մեծութեանը մինչև Զաուիտել կայարանը։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 22 օգոստոսի։ Այստեղ ժամանեց սերբիական Թագուհին, և իջևանեց իր ազգական իշխան Գիկայի մօտ։

ՄՕՍԿՎԱ, 22 օգոստոսի։ Մեծ պահանջ կայ բժանոյ անուանված ալիւրի, և այստեղ այդ ալիւրի սաստիկ քչութեան պատճառով, բարձրացաւ դրա գինը։ Կուրսկի և Բեազանի ճանապարհներով առ այժմ դեռ շատ քիչ ցորեն է բերվում. յոյս ունեն, որ սեպտեմբերի սկզբին, ցորեն ժողովելուց յետոյ, կը սկսեն ցորեն շատ բերել։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Օգոստոսի 19-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	98 ր.	80 ՝
Համբուրգի վրա 100 մարկ — . .	48 ՝	45 ՝
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	39 ՝	10 ՝
Ոսկի — արժէ — . .	8 ՝	04 ՝
Մաքսային կուպօններ — . .	159 ՝	50 ՝
Արծաթ — — — . . .	1 ՝	26 ՝
Բօրսային դիսկօնտներ — . .	6 և 7¼%	՝
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 ՝	— ՝
— — — — 2-րդ —	98 ՝	50 ՝
— — — — 3-րդ —	98 ՝	59 ՝
— — — — 4-րդ —	98 ՝	50 ՝
— — — — 5-րդ —	97 ՝	50 ՝
— — — — 6-րդ —	— ՝	— ՝
Նոր 4% փոխառութիւն.	82 ՝	— ՝
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	97 ՝	50 ՝
— — 2-րդ —	97 ՝	50 ՝
— — 3-րդ —	97 ՝	50 ՝
Ներքին 5% առաջին փոխառութ.	267 ՝	50 ՝
— երկրորդ —	47 ՝	50 ՝
5½% րենտա	101 ՝	50 ՝
Ոսկեայ րենտա.	176 ՝	50 ՝
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն.	151 ՝	50 ՝
Նոր երկաթուղային րենտա . . .	98 ՝	50 ՝
5% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	154 ՝	— ՝
— — թղթագ. .	92 ՝	25 ՝
Դրաւ. թղ. Աղնս. բանկի . . .	97 ՝	75 ՝
5½% դրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի.	98 ՝	— ՝
6% դրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 ՝	37 ՝
— — Պոլտավայի— —	101 ՝	— ՝
— —Պետ.Տուլսկ.— —	100 ՝	75 ՝
— — Կիեւվի — —	101 ՝	25 ՝
— — Մոսկվայի — —	101 ՝	25 ՝
— — Բեսարաբ. Տավր.—	100 ՝	25 ՝
— — Նիժ. Սամար. —	101 ՝	— ՝
— — Վիլնայի —	100 ՝	75 ՝
— — Թիֆլիսի—27 և 43 ա.	98 ՝	— ՝
— —Բուենոսայիսի-18 և 43 տ.	98 ՝	— ՝
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	648 ՝	— ՝
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	245 ՝	— ՝
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	81 ՝	50 ՝
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	93 ՝	50 ՝
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	93 ՝	50 ՝
Ոդեսայի — — .	94 ՝	— ՝
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբ. .	82 ՝	50 ՝

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն հասարակութեան, որ օգոստոսի 25-ից կը լինի **ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ** նոր աշակերտների միմիայն երկրորդ, երրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, իսկ նախապատրաստական և առաջին դասարաններում բոլորովին տեղ չը կայ։

Ցանկացողները պէտք է խնդրի հետ ներկայացնեն իրանց ծննդական և ծաղկի վկայականները։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի մէկից։

Տեսուչ՝ Ս. Ք. Բէգ-Նազարեանց

1—3

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆ համաձայն առաջիկայ սեպտեմբեր ամսի 11-ին կատարվելու է քաղաքիս ԲԵԴԼԵՀԷՄ սուրբ Աստուածածին եկեղեցու **ԵՐԵՑՓՈԽԱՆԻ** ընտրութիւնը, իսկ նոյն ամսի 18-ին ընտրութիւն երեցփոխանի ՏԱՓԻ-ԹԱՂԻ (ՔԱՄՈՑԵԱՆՑ) Սուրբ Գէորգ եկեղեցու։ Ուստի յիշեալ եկեղեցեաց մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակեալ օրերում առաւօտեան ժամի 11-ին սուրբ պատարագից յետոյ մասնակցելու ընտրութեանց։

1—2

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ կոնսիստորիայի ատենի մէջ նշանակած է **ԱՃՈՒՐԴ** առաջիկայ սեպտեմբերի 16-ին, առանց կրկնաձուրդի, կապալաւ տալու համար մի կրպակ, որ պատկանում է Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցուն և գտանվում է Միխայլովսկայա փողոցի վրա նոյն եկեղեցու մօտ։

1—3

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է որ և է մի տեղ Հայոց դպրոցներում ուսուցչութեան պաշտօն ունենալ։ Կարող է աւանդել՝ Հայոց լեզու, ռուսաց լեզու, ռուսաց աշխարհագրութիւն և պատմութիւն, նոյնպէս բնագիտութիւն։ Շաբաթական 26 դասին 600 ռուբլի վարձատրութիւն։ Պատրաստ է գնալ ամեն տեղ։

Հասցէն. КАРСЪ, Ерванду Васильевичу Казаріанцу.

2—5

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ

նորեկների խնդիրների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը։

2—3

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է ԱՆԻԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ 21 դասով ռուսաց լեզուից։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Թիֆլիս պ. Լևոն Թաթևոսեանցին, առաւօտեան 8—10 ժամը այս հասցէով. Тифлисъ, Авчальская ул, д, № 57.

2—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ լաւ գիտէ հայկական ձայնագրութիւն և ունի աջող ձայն, կամենում է ձայնագրութեան դասեր ունենալ դաւառական ուսումնարաններից մինում։ Պայմաններն են չաբաթական 12 դասի համար, տարեկան 300 ր., իսկ եկեղեցու մէջ տիրացուութեան համար 100 ր., բացի սրանից մի սենեակ և վառելիք։ Ցանկացողք կարող են դիմել Եղնիկ քահանայ Երզնկեանցին Թիֆլիսում։

2—3

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր է մի ուսուցչուհի ռուսաց լեզուի (չաբաթական 20 դաս). պայմանների մասին մանրամասնութիւններ կարելի է իմանալ Կ. Եաղուբեանից, Միքայէլեան փողոց, № 129 (երեկ. 5—7 ժ.)

3—3

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

„ԱՐԱՄԲԻՆ“

ՎԷՊ։

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. կենտրոնական դրավաճառանոցում, իշխ. Բէհրութեանի և Աբգ. Յովհաննիսեանի գործակալութեան մէջ և հեղինակի մօտ. Тифлисъ, Редакція «Арцаганкъ», Ширванзадэ.

Գինն է 75 կոպ.

Ճանապարհածախսով 1 ր.

4—10

Խիզդեկէլի գրավաճառանոցում ծախվում է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան խորհրդից թոյլտուութիւն ստացած Ամիրաղեանի և Տէր-Գաբրիէլեանցի կազմած «НОВАЯ КНИЖКА ДЛЯ ОБУЧЕНІЯ РУССКОМУ ЯЗЫКУ въ армянскихъ начальныхъ школахъ г. I и II» դասագիրքը։

2—3

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ երկդասեան երկսեռ ուսումնարանի համար հարկաւոր են՝ մի ուսուցիչ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ, մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ և ձայնագրութեան և մի ուսուցչուհի ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ։

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեանը։

4—5 (Շ. Ե.)

Մամուլի տակից լոյս տեսաւ

„Զրոյցներ“ բնական պատմութիւնից

Առաջին մաս.

Ս. Փիլոեանի

Գինն է 40 կոպ. Ծախում է Թիֆլիսում կենտրոնական և „Աղբիւրի“ գրավաճառանոցներում. իսկ օտարաքաղաքացիք կարող են դիմել հեղինակ հասցէով. Ново-Баязетъ. Учителю Саркису Филоянъ.

3—3

ԿԷՕԼԷՐԻ ԿԱԶՈՒԱՅԻՆ ԱՊՐԷՏՈՒՐ

Այդ կաշուային ապրէտուրայով, որը առանց ինքնագովութեան կարող եմ գերազանց անուանել, չուտով և յարմար օծվում են կօշիկներկի փոխանակ՝ կօշիկներ (մանաւանդ կանանց), սակավօյաժներ, ձիու սարքեր, կառքեր և այլն, սև փայլ տալու նրանց, և նոյնպէս խոնաւութիւն չանցկացնելու և կաշուին մեծ ամրութիւն տալու համար։ Իր օգտակար յատկութիւններով այդ յարմար է գործածել իւրաքանչիւր տնտեսութեան մէջ. արդէն այն բանը, որ կանանց կօշիկների համար կօշկանների փոխանակ գործածվող ապրէտուարը չէ մրոտում սպիտակեղէնը ուշադրութեան արժանի է և իրաւունք է տալիս նրան ընդարձակ կերպով տարածված լինելու։ Շիշերի մեծութիւնը, չը նայելով էժան գնին, կրկնակի է, արտասահմանեան «գլեանց-լակ» անուանված շիշերի հետ համեմատելով։

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Р. КЭОЛЭРИ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրա։ № 4. Ц. Е. О. (1—3)

ԿԷՕԼԷՐԵԱՆ ԽԻՆԱՅԻՆ ՋՈՒՐ

Գլխի վրա եղած թեփը ոչնչացնելու և մաղերը ամրացնելու համար։ Իրաքանչիւր գնող չուտով կը գնահատէ նրա զեղեցիկ ներգործութիւնը և առաւելութիւնը այդ տեսակի բոլոր ուրիշ արդիւնքներից։

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Р. КЭОЛЭРИ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրա։ № 4. Ц. Е. О. (1—3)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 26 օգոստոսի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ NIÉMEN (ՆԻԷՄԷՆ) նաւապետ SEIPIONI (ՍԷԻՊԻՕՆԻ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ։

2—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ԲԱԳԴԱՍ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑԱՒ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Գանօվսկայա փողոցի դիմաց, Սադովայա փողոցի վրա տ. № 38

Գիշերօթիկների, կիսագիշերօթիկների և երթևեկների քննութիւններն և ընդունելութիւնը կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից։

2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, սեպտեմբերի 1-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլոյլուի տան, Նարերէժնայա, և Թիֆլիսում նախկին Աբծրաունի դպրեվոում, № 103.

2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրա, № 11։ Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՋՐԻԱՊԷՍ եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

8—20 (Ե. Շ.)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ.

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԷՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլովինսկի պրոսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—իշխ. Գուրիէլիի տանը։

18—40

ՍՈՒՐԲ-ԽԱՉ քաղաքի հոգևոր միդասեան երկսեռ հայոց դպրոցների համար պէտք է մի ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց լեզուի։ Պէտք է դասախօսի միայն լեզուից տղայոց և օրիորդաց դպրոցի երկու բաժանմունքում, շաբաթական 24 դաս։ Գրութիւնից 6 դաս։ Մի խօսքով պէտք է հաշուել 24—30 դաս, տարեկան 400 ռուբլի ռոճիկով, առանց ոչնչի (այսինքն առանց ճանապարհածախսի, բնակարանի, վառելափայտի և ծառայի)։ Ցանկացողները թող շուտով դիմեն վերոյիշեալ պայմաններով՝ հոգաբարձութեանը։

3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրա, № 11։ Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՋՐԻԱՊԷՍ եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

8—20 (Ե. Շ.)

Թիֆլիսի „Տպագրական ընկերութեան“ հրատարակութեամբ՝ մամուլի տակն է և մինչև առաջիկայ սեպտ. մէկը լոյս կը տեսնէ Սահակ քահանայ Սահակեանցի հետաքրքիր աշխատութիւնները ա) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին-ուխտի (աշակերտաց համար) և բ) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ (առաջին գրքի նիւթի մշակութիւնը՝ ուսուցչաց համար)։ Վերջին գիրքը պատկերազարդ է և պարունակում է իր մէջ հրէից սրբազան անօթները և քարտէզներ։

4—5

Дозволено цензурою, Тифлисъ 22 Августа 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.